ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №4
«23» փետվար 2026թ. № ՇՄՆ-COP17-26/01 պայմանագրի

ք.Երևան «18» «06» 2026թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պ/կ Արկադի Խաչատրյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Սիմոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով կողմերի միջև 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «№ ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.2, 2.4.1, 2.2.4 և 7.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «№ ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագիրը լրացնել՝

1.1.1. վճարման ժամանակացույց հավելվածով՝ համաձայն Հավելված №1-ի,

1.1.2. «Հայաստանի կենսաբազմազանության մասին վավերագրական ֆիլմ և մուլտսերիալ» փուլային ծառայությունների մատուցման (ձեռքբերման) նկարագրով (տեխնիկական բնութագիր)՝ համաձայն Հավելված №2-ի,

1.1.3. «Հայաստանի կենսաբազմազանության մասին վավերագրական ֆիլմ և մուլտսերիալ» փուլային ծառայությունների մատուցման (ձեռքբերման) նախահաշիվը՝ համաձայն Հավելված №3-ի:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև 2026 թվականի փետրվարի 23-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2. Կատարողը պարտավոր է Համաձայնագրի կատարման նպատակով կնքված պայմանագրերի կամ համաձայանագրերի կամ հաշիվ-ապրանքագրերի կամ երրորդ անձանց կողմից ներկայացված, Համաձայնագրով նախատեսված ծառայությունների կամ աշխատանքների գնագոյացմանը վերաբերող այլ փաստաթղթերի պատճեն, դրանք կնքելուց կամ հաստատելուց կամ ստանալուց հետո 25 (քսանհինգ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Պատվիրատուին:

2.3. Պատվիրատուին տրամադրել Պայմանագրի 2.3.2 կետով նախատեսված «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի քարտուղարության ներկայացուցչի համաձայնությունը (այդ թվում՝ էլեկտրոնային փոստով ստանալու դեպքում)՝ Ծառայության մատուցման փուլային նկարագրի ու հանձնման-ընդունման արձանագրության վերաբերյալ:

2.4. Եթե Կատարողը Համաձայնագրի կատարման նպատակով պարտավորություններ է ստանձնել երրորդ անձանց առջև, սակայն Պատվիրատուի գործողությունների կամ անգործության հետևանքով կամ Պատվիրատուի կողմից Պայմանագիրը կամ Համաձայնագիրը դադարեցնելու կամ չեղարկելու հետևանքով երրորդ անձանց առջև առաջանում են նրանց հետ կնքված պայմանագրերով նախատեսված պարտավորություններ, ապա Պատվիրատուի կողմից այդ պարտավորություններն ամբողջ ծավալով ենթակա են հատուցման՝ Կատարողի կողմից հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու, ինչպես նաև ստանձնած պարտավորությունների շրջանակում սեփականության իրավունքով ձեռք բերված բոլոր նյութական արժեքները (առկայության դեպքում) և արդյունքային ցուցանիշները Պատվիրատուին հանձնելու դեպքում:

2.5. Եթե Կատարողը Համաձայնագրի կատարման ընթացքում հրաժարվում է այն կատարելուց, ապա Կատարողը պարտավոր է վճարել Պատվիրատուին Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև հատուցել Համաձայնագրի 1.1.4 կետով սահմանված գնման առարկան այլ անձանցից ձեռքբերման դեպքում գների դրական տարբերությունը: Սույն կետով նախատեսված դեպքերում Կողմերը կազմում են փոխադարձ հաշվարկների ակտ, որով.

ա) Կատարողի կողմից Պատվիրատուին է հանձնվում, իսկ Պատվիրատուն ընդունում է մինչ հրաժարման կամ լուծման պահը Համաձայնագրի արդյունքները,

բ) Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին վերադարձնել Համաձայնագրի շրջանակում կատարված բոլոր վճարումները, եթե դրանք չեն ծածկում փոխադարձ հաշվարկների ակտով կատարված ծախսերը:

2.6. Կանխավճարը մարվում է մինչև Համաձայնագրով նախատեսված ծառայությունների ավարտը՝ Պայմանագրի 4.2 կետով նախատեսված կարգով՝ հանձնման-ընդունման գործընթացի կազմակերպմամբ:

2.7. Համաձայնագրի Հավելված №3-ի «Չնախատեսված ծախսեր» տողով նախատեսված միջոցները կարող են օգտագործվել միայն փաստացի առաջացած ծախսերի ֆինանսավորման նպատակով: Ընդ որում, այդ ծախսերի իրականացման համար Պատվիրատուի նախնական համաձայնեցումը պարտադիր է: Նշված գումարի չօգտագործված մասը ենթակա է վերադարձման Պատվիրատուին: Պատվիրատուն սույն կետով նախատեսված համաձայնությունը կամ մերժումը հայտնում է Կատարողին 1 (մեկ) օրվա ընթացքում:

2.8. Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի Հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

2.9. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն համաձայնագրով նախատեսված ֆինանսական միջոցների հատկացման մասին ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Շրջակա միջավայրի նախարարություն
ք.Երևան, Կառավարական տուն 3
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011066439
ՀՎՀՀ 02507198
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
Ա.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ
ք.Երևան, Նալբանդյան 25 ա, բն. 58
«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1660030207649200
ՀՎՀՀ 02893152
«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի
տնօրեն
Հ.Սիմոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված №1
«18» «06» 2026թ. կնքված
համաձայնագիր №4
«23» «փետրվարի» 2026թ. կնքված
№ «№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
Ա.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
ԴՈՊԻՆԳ ՍՓԵՅՍ ՍՊԸ
տնօրեն
Հայկ Սիմոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(ՀՀ դրամ)

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1		«Հայաստանի կենսաբազմազանության մասին վավերագրական ֆիլմ և մուլտսերիալ» փուլային ծառայություններ	-	-	-	-	-	105 019 200	105 019 200	105 019 200	116 688 000	116 688 000	116 688 000	116 688 000	116 688 000

Հավելված №2
«18» «06» 2026թ. կնքված
համաձայնագիր №4
«23» «փետրվարի» 2026թ. կնքված
«№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
Ա.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի
տնօրեն
Հ.Սիմոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՒԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Լայնամասշտաբ տեղեկատվական և գովազդային արշավ՝ Հայաստանում անցկացվող *COP17* համաժողովի մասին հնարավորինս լայն լսարանին տեղեկացնելու նպատակով: Միջոցառումների անցկացման վայրերի, կազմակերպչական գործընթացներում ներգրավված տրանսպորտային միջոցների և այլ տարրերի բրենդավորում:

Հայաստանի կենսաբազմազանության մասին վավերագրական ֆիլմ

Նպատակ

Մատուցման ենթակա փուլային ծառայության սույն նկարագիրը մշակվել է Շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2026 թվականի փետրվարի 23-ին կնքված «ՇՄՆ-COP17-26/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.4.1. կետի և Հավելված 1.1-ի 2-րդ կետի «բրենդինգի և ցուցանակների պատրաստում հանդիպման անցկացման ողջ տարածքում» պարբերությամբ սահմանված պահանջների կատարման նպատակով:

COP17 հաղորդակցման ռազմավարության շրջանակում անհրաժեշտ է ապահովել միջոցառման վերաբերյալ իրազեկվածություն, ինչպես նաև Հայաստանի՝ որպես կենսաբազմազանությամբ հարուստ և բնապահպանական օրակարգում կարևոր դերակատար երկրի վերաբերյալ խորքային և արժեքային ընկալման ձևավորում:

Սույն նախագիծը հանդիսանում է *COP17* հաղորդակցման և առաջխաղացման միասնական ռազմավարության բաղադրիչ և իրականացվում է դրա շրջանակում՝ որպես բովանդակային և արժեքային հաղորդակցության առանցքային գործիք:

Նախագծի շրջանակում նախատեսվում է իրականացնել միջազգային վավերագրական ֆիլմի ստեղծում, որը միավորված է ընդհանուր հաղորդակցման նպատակներով և ռազմավարական ազդեցությամբ:

Ֆիլմի ստեղծումը նպատակ ունի՝

- ապահովել Հայաստանի կենսաբազմազանության բացառիկության ներկայացումը միջազգային լսարանին
- նպաստել բնության պահպանության վերաբերյալ արժեքային և ընկալողական կապի ձևավորմանը
- ամրապնդել *COP17*-ի թեմատիկ և բովանդակային հիմքերը
- ապահովել բարձրորակ վիզուալ բովանդակություն՝ միջազգային հարթակներում օգտագործման համար
- ձևավորել երկարաժամկետ օգտագործման հաղորդակցական բովանդակություն
- առանձնացնել կենսաբազմազանության այն ուղղությունները և բնական ռեսուրսները, որոնց պահպանության և զարգացման համար նպատակահարմար է ներգրավել ներդրումներ
- բարձրացնել տեղական հասարակության իրազեկվածությունը և ուշադրությունը կենսաբազմազանության պահպանության կարևորության նկատմամբ

1. Վավերագրական ֆիլմ

1.1 Ստեղծագործական մոտեցում

Նախագծի շրջանակում նախատեսվում է ներգրավել *ARTE France* բարձր վարկանիշ ունեցող ֆրանսիական հեռուստաալիքի հետ համագործակցող սցենարիստ, ով ունի նմանատիպ միջազգային նախագծերի իրականացման փորձ: Նրա մասնակցությամբ իրականացվում է Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության մասին վավերագրական ֆիլմի սցենարային մշակումն ու արտադրությունը:

Ֆիլմի ցուցադրումը պլանավորվում է նշված ֆրանսիական հեռուստաալիքով, ինչը ապահովում է նախագծի միջազգային ցուցադրություն և ինստիտուցիոնալ վստահելիություն: Ֆիլմի արտադրությունը իրականացվում է միջազգային տեխնիկական և բովանդակային ստանդարտներին համապատասխան՝ ապահովելով բարձրորակ վիզուալ և նարատիվ արդյունք, ինչպես նաև նախատեսելով մասնակցություն միջազգային կինոփառատոներին:

Բովանդակային տեսանկյունից ֆիլմը ներկայացնում է Հայաստանի կենսաբազմազանությունը՝ համադրելով գիտական, փորձագիտական և պատմողական մոտեցումները, կապելով տեղային էկոհամակարգերը գլոբալ բնապահպանական օրակարգի հետ և ձևավորելով համապարփակ, միջազգային լսարանին հասկանալի և ընկալելի նարատիվ:

Որպես հաղորդակցման գործիք՝ ֆիլմը միաժամանակ լուծում է մի շարք ռազմավարական խնդիրներ՝

- ձևավորում է Հայաստանի վերաբերյալ խորքային և վստահելի միջազգային ընկալում
- ամրապնդում է *COP17*-ի թեմատիկ և բովանդակային հիմքերը
- ստեղծում է էմոցիոնալ կապ բնության պահպանության գաղափարի շուրջ
- ապահովում է բարձրորակ վիզուալ բովանդակություն միջազգային մեդիա և ինստիտուցիոնալ հարթակներում օգտագործման համար

Միևնույն ժամանակ, ֆիլմը գործում է որպես երկարաժամկետ հաղորդակցական ակտիվ՝

- ապահովելով բազմահարթակ կիրառելիություն (հեռուստատեսություն, փառատոններ, թվային հարթակներ)
- նպաստելով միջազգային ուշադրության և վստահության աճին
- ձևավորելով ներդրումային հետաքրքրություն կենսաբազմազանության պահպանության և զարգացման ուղղություններով

1.2 Արտադրական պահանջներ

Վավերագրական ֆիլմի արտադրությունը ներառում է ամբողջական արտադրական ցիկլ՝

- Հետազոտական և սցենարային մշակում
- Նկարահանման պլանավորում և լոկացիաների ընտրություն ՀՀ տարբեր մարզերում
- Նկարահանումներ՝ բնական միջավայրում
- Հարցազրույցների կազմակերպում և նկարահանում
- Արխիվային նյութերի հավաքագրում և ինտեգրում
- Տեսանյութերի մոնտաժ և նարատիվի կառուցում
- Գունային շտկում
- Ձայնային ձևավորում և երաժշտական ձևավորում
- Բազմալեզու ենթագրերի պատրաստում և/կամ թարգմանություն ըստ անհրաժեշտության

Ֆիլմը նախատեսվում է մինչև *մինչեւ 45* րոպե ընդհանուր տևողությամբ և կարող է իրականացվել՝

- մեկ ամբողջական ֆիլմի ձևաչափով
- կամ մի քանի կարճ ձևաչափերով՝ ադապտացված տարբեր հարթակների համար

Վերջնական նյութը հանձնվում է՝

- *4K և Full HD* master ֆորմատներով

2. Նախագծի կազմակերպում և կառավարում

Նախագծի արդյունավետ և համակարգված իրականացման նպատակով կիրառվում է կենտրոնացված կառավարման մոդել, որի շրջանակում ապահովվում է նախագծի ամբողջական կազմակերպումը՝ գաղափարական, ստեղծագործական, տեխնիկական և գործառնական բոլոր բաղադրիչների համադրմամբ:

Ծառայությունը ներառում է՝

- **Ստեղծագործական հայեցակարգի մշակում և համակարգում**
  - վավերագրական ֆիլմի ստեղծագործական հայեցակարգի մշակում՝ հաղորդակցման ռազմավարության հիման վրա
  - նարատիվի, կառուցվածքի և բովանդակային ուղղությունների միասնական ձևակերպում
  - վիզուալ լեզվի և ոճական մոտեցման սահմանում
  - բովանդակության համապատասխանության ապահովում *COP17* հաղորդակցման ընդհանուր ռազմավարությանը
- **Նախագծի ընդհանուր կառավարում**
  - նախագծի փուլային պլանավորում և ինտեգրված ժամանակացույցի մշակում
  - ներգրավված թիմերի և ենթակապալառուների համակարգում
  - ֆիլմի արտադրական փուլերի փոխկապակցվածության կառավարում
  - որոշումների կայացման և հաստատման գործընթացների կազմակերպում
  - որակի վերահսկում և արդյունքների համապատասխանության ապահովում նախանշված նպատակներին

3. Ներգրավվող մասնագետներ

Նախագծի իրականացման համար նախատեսվում է բազմապրոֆիլ մասնագիտական թիմի ներգրավում՝ ներառելով ինչպես հիմնական թիմի անդամներին, այնպես էլ ենթակապալառու կազմակերպությունների մասնագետներին՝ ապահովելով նախագծի ամբողջական իրականացում՝ գաղափարից մինչև գործառնական շահագործում:

<u>Ստեղծագործական և բովանդակային ուղղություն</u>
- բեմադրող ռեժիսոր
- սցենարիստներ (ներառյալ միջազգային փորձ ունեցող սցենարիստ՝ *ARTE France* հետ համագործակցության շրջանակում)
- հետազոտողներ (կենսաբազմազանության թեմատիկ ուղղություններով)
- ստեղծագործական տնօրեն

<u>Պրոդյուսերական և կառավարման ուղղություն</u>
- գլխավոր պրոդյուսեր
- գծային պրոդյուսեր
- նախագծի ղեկավար
- արտադրական մենեջեր
- արտադրական համակարգողներ

<u>Վիզուալ և արտադրական ուղղություն</u>
- օպերատորական խումբ
- դրոնի օպերատորներ
- լուսային տեխնիկներ
- սթորիբորդի արտիստներ
- անիմատորներ

<u>Աուդիո և ձայնային ձևավորում</u>
- ձայնային ռեժիսոր
- ձայնային դիզայներներ
- կոմպոզիտորներ

<u>Հետարտադրական և ադապտացիոն ուղղություն</u>
- մոնտաժողներ
- գունային ուղղման մասնագետներ
- ձայնային մոնտաժի և միքսինգի մասնագետներ

<u>Լեզվական և միջազգային ադապտացիա</u>
- թարգմանիչներ
- միջազգային բովանդակության ադապտացիայի մասնագետներ

<u>Գործառնական և լոգիստիկ աջակցում</u>
- լոկացիաների համակարգողներ
- լոգիստիկ պատասխանատուներ

- թույլտվությունների և ադմինիստրատիվ գործընթացների մասնագետներ
- իրավական և պայմանագրային գործընթացների մասնագետներ

Նախնական գնահատմամբ նախագծի տարբեր փուլերում կարող է ներգրավվել մինչև *30* մասնագետ, (ներառյալ հիմնական թիմի անդամները և ենթակապալառու մասնագետները)՝ կախված նկարահանման աշխարհագրությունից, լոկացիաների քանակից և արտադրական բարդությունից:

Հավելվածի ֆինանսական գնահատական

Հայաստանի կենսաբազմազանության մասին վավերագրական ֆիլմի իրականացման ընդհանուր բյուջեն կազմում է մինչև 116,688,000 ՀՀ դրամ (ներառյալ հարկեր և պարտադիր այլ վճարներ): ՇՄ նախարարության և Կատարողի միջև կնքվող պայմանագրով կարող է նախատեսվել Ծրագրի բաղադրիչների ֆինանսավորման վերաբաշխումներ, որը չի կարող գերազանցել Կառավարության որոշմամբ հատկացված գումարը:

Հավելված №3
«18» «06» 2026թ. կնքված
համաձայնագիր №4
«23» «փետրվարի» 2026թ. կնքված
«№ ՇՄՆ-COP17-26/01» պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
Ա.Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ-ի
տնօրեն
Հ.Սիմոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Հայաստանի կենսաբազմազանության մասին վավերագրական ֆիլմ և մուլտսերիալ» փուլային ծառայությունների մատուցման (ձեռքբերման)
(<< դրամ)

h/h	**Ծառայության անվանումը**	**Նկարագրություն**	**Չափի միավորը**	**Քանակը**	**Միավորի գինը (ներառյալ ԱԱՀ)**	**Ընդհանուր գումարը (ներառյալ ԱԱՀ)**
1	**Հայաստանի կենսաբազմազանության մասին վավերագրական ֆիլմ**	Մինչև45 րոպե տևողությամբ ֆիլմ: 4K: Հայերեն, անգլերեն և ֆրանսերեն: Նկարահանման օրերի քանակը՝ 35 օր	հատ	1		116,688,000
1.1	Ստեղծագործական հայեցակարգի մշակում		հատ	1	5 300 000	5 300 000
1.2	Սցենարային մշակում		հատ	1	6 300 000	6 300 000
1.3	Նախագծման, հետազոտության և նախապատրաստական փուլի ծախսեր		նախագիծ	1	4 500 000	4 500 000
1.4	Բեմադրող ռեժիսորի ծառայություններ		անձ	1	12,300,000	12 300 000
1.5	Բեմադրող օպերատորի ծառայություններ		նախագիծ	1	9 938 000	9 938 000
1.6	Երկրորդ օպերատորի ծառայություններ		նախագիծ	1	3 500 000	3 500 000
1.7	Պրոդյուսերական ծառայություններ		նախագիծ	1	4 800 000	4 800 000
1.8	Ադմինիստրատիվ թիմ	Ասիստենտ և գծային պրոդյուսեր, ռաներներ	անձ/ նախագիծ	10	350 000	3 500 000

1.9	Դրոնով նկարահանման ծառայություններ		օր	3	150 000	450 000
1.10	Տեսախցիկ		հատ / օր	3 / 35	70 000	7 350 000
1.11	Օբյեկտիվներ		օր	35	20 000	700 000
1.12	Եռոտանի (Tripod)		հատ / օր	2 / 35	15 000	1 050 000
1.13	Ռոնին		օր	35	19 000	665 000
1.14	Տեսախցիկի խոսափող (Shotgun)		հատ / օր	2 / 35	19 000	1 330 000
1.15	Ամրակցվող խոսափող		օր	35	15 000	525 000
1.16	Լուսավորման սարքավորումներ (Amaran/Aputure)		օր	35	150 000	5 250 000
1.17	Հնչյունային տեխնիկա (Zoom, Boom և այլն)		օր	15	90 000	1 350 000
1.18	Ֆիլտր ND		հատ / օր	2 / 15	15 000	450 000
1.19	Մոնիտոր		հատ / օր	2 / 35	18 000	1 260 000
1.20	HDD կոշտ սկավառակ 4 tb (արխիվի համար)		հատ	2	100 000	200 000
1.21	Ճանապարհածախս		նախագիծ	1	2 507 000	2 507 000
1.22	Սնունդ		անձ / օր	40 / 35	4 000	5 600 000
1.23	Գիշերակաց		անձ / օր	14 /10	20 000	2 800 000
1.24	Գրաֆիկական դիզայների ծառայություններ		նախագիծ	1	1 200 000	1 200 000
1.25	Գեղարվեստական ղեկավարի ծառայություններ		նախագիծ	1	1 500 000	1 500 000
1.26	Մոնտաժի ծառայություններ		ֆիլմ	1	4 800 000	4 800 000
1.27	Գրաֆիկա և լուսագրեր		ֆիլմ	1	900 000	900 000
1.28	Ձայնային մշակում		ֆիլմ	1	1 355 000	1 355 000
1.29	Գունային մշակում		ֆիլմ	1	2 500 000	2 500 000
1.30	Հետկադրային ձայն		անձ	3	900 000	2 700 000
1.31	Ձայնագրման ստուդիա		հատ/ ժամ	1 / 14	500 000	500 000
1.32	Արխիվային կադրերի ձեռքբերում		նախագիծ	1	5 400 000	5 400 000
1.33	Երաժշտության ձեռքբերում		հատ	1	2 000 000	2 000 000
1.34	Թարգմանչական ծառայություններ		լեզու/ նախագիծ	2 / 1	300 000	600 000
1.35	Խմբագիր		նախագիծ	1	500 000	500 000
1.36	Լրագրող		հարցազրույց	10	50 000	500 000
	Չնախատեսված ծախսեր		տոկոս	10		10 608 000
	ԸՆԴԱՄԵՆԸ					**116 688 000**